ԲԱՆԱՎԵՃ ДИСКУССИИ

ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏԻ ՏԵՂԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԸՍՏ ՔԱՐՏԵԶԱԳԵՏ ԿԱՍՏՈՐԻՈՒՍԻ «ՀՌՈՄԵԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱՔԱՐՏԵԶԻ»

Մ. Մ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Շուրջ երկու դար է, որ հունա-հռոմեական պատմիչների ձեռագրերում շարադրված նյութերի հիման վրա ուսումնասիրություններ են կատարվում պատմական մայրաքաղաք Տիգրանակերտի տեղը ճշտելու նպատակով։ Առաջարկված վարկածներից ոչ մեկը անվիճարկելի փաստերով դեռ չի հաստատվել։ Դրա արտահայտություններից մեկը պետք է համարել այն հանգամանքը, որ վերջերս Երևանի պետական համալսարանի հրատարակած «Հայ ժողովրդի պատմության» բուհական դասագրքի սկզբի էջերից մեկում Տիգրանակերտը տեղայնացվել է Նփրկերտ-Ֆարկինի ավերակների հետ. «Տիգրիս գետի մեջ թափվող վտակներից ամենահայտնին Քաղիրթն է (Նիմֆիոս, այժմ Բաթմանսու), որի աջակողմյան փոքրիկ օժանդակներից մեկի՝ Ֆարկինի կամ Ֆարկինսուի ափին են գտնվում Տիգրանակերտ մայրաքաղաքի ավերակները»։ Սակայն նույն դասագրքի վերջին էջերից մեկում նշվում է, որ պատմական Հայաստանի մայրաքաղաք Տիգրանակերտը ներկայումս գոյություն ունեցող Դիարբեքիր (Ամիդ) բնակավայրն է[1]։ Գերմանացի քարտեզագետ Կոնրադ Միլլերը Տիգրանակերտ մայրաքաղաքը տեղադրել է Արզնում[2], իսկ մեկ ուրիշը՝ Միջագետքում և այլն։

Հայաստանի երբեմնի մայրաքաղաք Տիգրանակերտի տեղադրության ճշտորոշումը կբացահայտեր մ. թ. ա. I դարի պատմական, բնաաշխարհագրական մանրամասներն ու այդ ժամանակաշրջանի իրադարձությունների և պարսկա-հռոմեական շահերի բախումների ասպարեզը, ինչպես և հռոմեական լեգիոնների ու Մարաստանի ռազմական արշավանքների երթուղիները։ Այս փաստերը, անշուշտ, կօգնեին պատմական դեպքերի ճշմարտացի վերլուծությանը։ Տիգրանակերտի տեղադիրքի ստրատեգիական առանձնահատկության մասին նշել է գերմանացի զորավար Մոլտկեն, ըստ երևույթին, նկատի ունենալով քննարկելի հարցի կարևորությունը։ Այդ նույն հարցին են նվիրված մի շարք աշխատություններ, հրատարակված ինչպես Սովետական Միությունում, այնպես էլ Սփյուռքում, որոնց հեղինակները ջանում են վերացնել այն շփոթը, որ գոյություն ունի Տիգրանակերտի տեղադրության առթիվ։ Սակայն մինչև այժմ առաջարկված բոլոր վարկածները՝ մայրաքաղաք Տիգրանակերտի տեղը ճշտելու գործում, չեն համապատասխանում իրականության, որովհետև հենված են պատմիչների նկարագրական շարադրանքի վրա, որոնք ոչ թե այդ քաղաքի տեղադրությանն են նվիրված, այլ պատմական որևէ դեպքի բացահայտմանը։

Հայ և օտար պատմիչները ժամանակին ցանկացել են պարզել մայրաքաղաք Տիգարնակերտի տեղադիրքը, սակայն փաստերի բացակայության պատճառով միայն հիշատակել են այն, առանց կոնկրետ նկարագրությամբ տալու։ Այսպես, Սեբեոսը հիշատակում է Ամիդ քաղաքը, ինչպես նաև մայրաքաղաք Տիգրանակերտը, սակայն առանց նույնացնելու և աշխարհագրական տեղադիրքերը նկարագրելու[3]։ Խոսելով պարսից զորքի փութկոտ առաջխաղացման

---

[1] *Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն. Երևանի պետհամալսարանի հրատարակչություն. 1975, էջ 7, 737։*

[2] K. Miller. Itineraria Romana. Stuttgart, 1916, S. 745.

[3] *Սեբեոս. Պատմություն. Երևան, 1959, էջ 77։*

մասին, պատմիչը ընդգծում է. «Անցանէ ի Գարդման ընդդէմ Նորա և բանակի միւս Տիգրանակերտի հանդիման Նորա։ Եւ Շահէնն հասեալ բանակեցաւ ի թիկանց Նրակլի ի Տիգրանակերտ ավանի»։ Կնշանակի հեղինակը նշել է, որ այդ ժամանակներում գոյություն են ունեցել Հայաստանի տարբեր վայրերում Տիգրանակերտ անվամբ ավաններ, որոնք ոչինչ ընդհանուր չունեն մայրաքաղաքի հետ։ Փավստոս Բուզանդը, այլ քաղաքների շարքում, հիշատակում է Ամիդը և մայրաքաղաք Տիգրանակերտը, սակայն առանց նույնացնելու և կամ դրանց վայրերը աշխարհագրական մանրամասնությամբ պարզաբանելու։ Ներկայումս համարյա բոլոր ուսումնասիրողները Սիլվան քաղաքի տեղադիրքը տեղայնացնում են մայրաքաղաք Տիգրանակերտի հետ, բայց առանց համոզեցուցիչ փաստերի։ Սիլվան (Նփրկերտ) բնակավայրը IV դարի վերջում ստացել է Մարտիրոսաց քաղաք (Մարտիրուպոլիս) անունը, իսկ ավելի ուշ՝ արաբական տիրապետության շրջանում, կոչվել է Միաֆարղին կամ Մուֆարղին և ոչ մի հիմք չկա նույնացնելու այն մայրաքաղաք Տիգրանակերտի հետ։

Մատթեոս Ուռհայեցին մի քանի անգամ հիշատակում է այդ բնակավայրը քաղաքական ու ռազմական անցքերի կապակցությամբ, սակայն չի նույնացնում Տիգրանակերտի հետ։ Կիրակոս Գանձակեցին մի քանի անգամ հիշատակում է Ամիդը, սակայն Տիգրանակերտի հետ առանց նույնացնելու։ Ստեփանոս Ասողիկը նկարագրել է Հերակլի 624 թ. արշավանքը Պարսկաստանի դեմ ու հիշատակել է Արցախ նահանգի Տիգրանակերտ ավանը, սակայն հիշատակելով տարբեր կապակցությամբ Դիարբեքիրն ու Նփրկերտը (Սիլվան), երբեք չի հիշատակել մայրաքաղաք Տիգրանակերտը։ VII դարի Աշխարհացույցի հեղինակը հիշատակել է Դկլաթ (Տիգրիս) գետի Բաթման վտակը, որ բխում է Սանասանի լեռներից, բաժանելով Նփրկերտն ու Քղիմար բնակավայրերը, բայց ոչ մի տեղ չի նշել Տիգրանակերտը։ Տիգրանակերտի տեղադրության մասին գրել է Հ. Տաշյանը՝ հետևելով Լեման-Հաուպտի ենթադրական տեսակետին[5], Ա. Ալպոյաճյանը, ժխտելով այն վարկածը, որ Տիգրանակերտը գտնվել է Դիարբեքիրի տեղում, այնուհանդերձ իր աշխատության ներդիր քարտեզի վրա Ամիդ քաղաքը մակագրել է որպես մայրաքաղաք Տիգրանակերտ[6]։ Հր. Աճառյանը իր աշխատության ներդիր քարտեզի վրա Դիարբեքիր բնակավայրը մակագրել է Տիգրանակերտ և այլն[7]։

Բեռլինի գիտությունների ակադեմիայի անդամ Հ. Կիպերտը նույնպես ուսումնասիրություն է կատարել Տիգրանակերտի տեղադրության վերաբերյալ և արդյունքը հրապարակել է հատուկ աշխատությունում[8]։ Քննարկվող հարցը գրաֆիկորեն ներկայացնելու նպատակով հեղինակը աշխատությանը կցել է քարտեզ՝ վերծանված Պտղոմեոսի անալիտիկ տվյալների հիման վրա, բայց առանց հաշվի առնելու երկրագնդի տարբեր մեծության պարամետրերից առաջացած հակասությունները։ Բանն այն է, որ քարտեզագրական հիմք կաղմելիս Պտղոմեոսի կողմից ընդունված է համեմատաբար փոքր երկրագունդ և, հետևաբար, նրա մակերևույթի վրայի բոլոր բնակավայրերի կոորդինատները ներկայիս չափումներից ստացված մեծ պարամետրեր ունեցող երկրագնդի մակերևույթի վրա ներկայացնելու համար նախ անհրաժեշտ է, որ Պտղոմեոսի աշխարհագրական կոորդինատները ուղղվեն համապատասխան մեծություններով՝ դիֆերենցիալ հավասարություններից ստացված արժեքներով և համաչափ դարձվեն երկրի իրական մեծությանը։

Պտղոմեոսի տվյալներով վերծանված քարտեզի վրա պրոֆ. Կիպերտը տեղադրել է Տիգրանակերտ անվամբ ավան, որը ոչ մի կապ չունի մայրաքաղաք Տիգրանակերտի հետ։ Պտղոմեոսի այդ կոորդինատներով նշված էր Նա-

---

4 Փավստոս Բուզանդ. Պատմություն Հայոց. Երևան, 1966, էջ 84, 261։

5 Տե՛ս «Հանդես ամսօրյա», 1907, էջ 21։

6 Տե՛ս Ա. Ալպոյաճյան. Պատմական Հայաստանի սահմանները. Գահիրե, 1950։

7 Տե՛ս Հր. Աճառյան. Հայոց լեզվի պատմություն. Երևան, 1951։

8 H. Kiepert. Über die Lage der armenischen Haupt-Stadt Tigranokerta. Berlin, 1873.

խիջևանից հարավ ընկած ներկայիս Մարակերտ բնակավայրը, որ գոյություն է ունեցել Պտղոմեոսի ժամանակ և նույնպես կոչվել է Տիգրանակերտ[9]։ Այս մոտեցումների հետևանքով անվստահություն էր ստեղծված Պտղոմեոսի աշխարհագրական մանրամասների կոորդինատների նկատմամբ, չնայած սխալը իրականում ոչ թե Պտղոմեոսի կողմից էր թույլ տրված, այլ նրա քարտեզը անճիշտ վերծանողի։ Հաշվի առնելով Տիգրանակերտի ստրատեգիական տեղադիրքը և պորավար Մոլտկեի արտահայտած կարծիքը, ըստ երևույթին, քարտեզագրական հիշյալ սխալները դեր չէին խաղացել Հ. Կիպերտի աշխատանքներում, որովհետև նրա եզրակացությունը՝ թե Տիգրանակերտը գտնվել է Տիգրիս գետի ներկայիս Արզան (Գարզան) վտակի ձախ ափին, աննշան սխալով էր պարզաբանում մայրաքաղաք Տիգրանակերտի տեղադիրքը։

Տիգրանակերտի տեղադրությամբ հետաքրքրվել է նաև պրոֆ. Էդուարդ Զախաուն, որն իր ուսումնասիրության արդյունքները հրատարակել է հատուկ աշխատությամբ[10], հանգելով եզրակացության, որ Տիգրանակերտ մայրաքաղաքը կառուցված է եղել Միջագետքի սահմանում, Մարդին բնակավայրից հարավ-արևմուտք. Տիգրանակերտի այդ տեղադիրքը հիմնավորելու նպատակով հեղինակը հիշատակել է Կլավդիոս Պտղոմեոսի «Աշխարհագրական ձեռնարկում» շարադրված կոորդինատները, սակայն Պտղոմեոսի նշած այդ Տիգրանակերտ ավանը ոչ մի առնչություն չունի մայրաքաղաքի հետ, որովհետև, ըստ կոորդինատների, այն գտնվել է Կորդուքում՝ ներկայիս Կալերեշ բնակավայրի տարածքում։ Հեղինակի նշած տեղանքը գտնվել է Եդեսիա—Մծբին ու Ամիդ—Մծբին ճանապարհների խաչմերուկում, որ անշուշտ ոչինչ ընդհանուր չունի մայրաքաղաք Տիգրանակերտի տեղադրության հետ։ Ընկալելու համար Պտղոմեոսի ընդունած երկրագնդի բնակավայրերի տեղադիրքը, հարկ է գիտենալ, որ ըստ Պտղոմեոսի Սիլվան (Սոեիտա) բնակավայրի տեղադիրքը որոշվում է 39°30′ լայնությամբ և 72°50′ երկայնությամբ. մինչդեռ այսօրվա քարտեզների համաձայն, որ կազմված են երկրի իրական պարամետրերի հիման վրա, նույն Սիլվանի տեղադիրքը բնորոշվում է 37°50′ լայնությամբ և 40°58′ երկայնությամբ (հարկավ, հաշվի առնելով Ֆերրո-Գրինվիչ 17°39′ երկայնության տարբերությունը)։ Սակայն նշված տարբերությունը աշխարհագրական կոորդինատներում (լայնություններում և երկայնություններում) հաստատուն մեծություն չէ, այն անհամաչափ աճում է թե՛ դեպի հյուսիս և թե՛ դեպի արևելք[11]։

Տիգրանակերտի տեղադիրքը Կլավդիոս Պտղոմեոսի աշխատությունում ճիշտ և հիմնավոր կլիներ տրված, որովհետև այն կլիներ ըստ աշխարհագրական կոորդինատների՝ լայնության և երկայնության, սակայն Պտղոմեոսը այդ մասին ոչ մի տվյալ կամ հիշատակություն չունի իր ութ հատորից բաղկացած «Աշխարհագրական ձեռնարկում»։ Տիգրանակերտը հիմնվել է մ. թ. ա. 78 թ. և բազմամարդ է դարձել ի հաշիվ այլ քաղաքների բնակիչների, նրանց տեղահանման ու ներգաղթեցման միջոցով։ Ապպիանոսի վկայությամբ Տիգրան II-ը բնակիչներ է ներգաղթեցրել Կապադովկիայից, Կիլիկիայից, Ասորեստանից, Օսրոյենից, Ադիաբենից ու Կորդուքից։ Ստրաբոնի վկայությամբ. մ. թ. ա. 69 թ. հռոմեական բանակը արշավեց Տիգրանակերտ և ավերեց քաղաքը, իսկ ներգաղթած բնակիչներին վերադարձրեց իրենց երկրները, տեղում թողնելով միայն մի փոքրիկ գյուղ[12]։ Պտղոմեոսի ժամանակ Տիգրանակերտը, որպես փոքրիկ գյուղ, ըստ երևույթին, կորցրել էր նշանակությունը աշխարհագրական քարտեզների համար և ցույց չէր տրված «Աշխարհագրական ձեռնարկում», սակայն որպես պատմական իրողություն նկարագրված էր Ստրաբոնի կողմից։

---

9 Պտղոմեոսի ժամանակ մայրաքաղաք Տիգրանակերտը մի փոքրիկ ավան էր, որ նշած աշխարհագրական մանրամասների շարքում չէր կարող տեղ գրավել։

10 Eduard Sachan. Über die Lage von Tigranokerta. Berlin, 1880, S. 93.

11 Տե՛ս այդ մասին Մ. Մ. Խաչատրյան. Հայկական լեռնաշխարհն ըստ Պտղոմեոսի քարտեզագրական տվյալների.—«Պատմա-բանասիրական հանդես», 1980, № 2։

12 Strabo. Geographia. Пер. М. Мищенко. 1879, с. 542.

Պտղոմեոսի ներկայացրած Տիգրանոամա (ըստ երևույթին Տիգրանավան) և Տիգրանակերտ բնակավայրերը, որ կոորդինատներով են նշվել, Մանանդյանն ընդունել է Կորդուաց աշխարհում (որովհետև այդ կոորդինատները չեն ուղղված երերագնդի տարբեր պարամետրերից առաջացած մեծությամբ)։ Ուսումնասիրողները եզրակացրել են նաև, որ «չպետք է օգտվել Պտղոմեոսի կոորդինատներից, որովհետև Տիգրանակերտը պատկերված է Վանա լճից արևելք, որ խիստ կոպիտ սխալ է»։ Սակայն այդ եզրակացությունները հիմնված չեն փաստերի վրա, չեն համապատասխանում իրականության և պարզապես թյուրիմացության հետևանք են։ Պտղոմեոսի Տիգրանոամա և Տիգրանակերտ բնակավայրերը Արցախ և Գողթն գավառների այն բնակավայրերն են, որոնք գոյություն ունեին Պտղոմեոսի ժամանակ։ Կնշանակի հաշվի չի առնված հայ պատմիչների դիտողությունը, թե՝ «Հայտնի են Տիգրանակերտեն անկախ երեք այլ Տիգրանակերտներ։ Առաջինը՝ Ուտիքի նահանգին մեջ, Գանձակի հյուսիսարևմուտքին, երկրորդը՝ Արցախի նահանգին մեջ, Փայտակարանի հյուսիսարևմուտքին, իսկ երրորդը՝ Գողթն գավառին մեջ, Նախիջևանի հարավարևելքին»[13]։

Այն վարկածը, թե Տիգրանակերտ մայրաքաղաքը տեղադրված է եղել ներկայիս Ֆարկին՝ Սիլվան բնակավայրի տարածքում, առաջին անգամ հայտնել է գերմանացի պատմաբան Լեման-Հաուպտը[14]։ Այդ եզրակացությանը հիմք էին ծառայել Սիլվանի պատնեշներում մնացած առանձին քարերի վրա փորագրված այն արձանագրությունները, որ հայտնաբերվել էին ուսումնասիրության ընթացքում։ Արձանագրությունների ընթերցումից, ինչպես և այլ աղբյուրներից հայտնի է, որ այդ ժամանակներում քաղաքների բոլոր խնդիրները անմիջականորեն թագավորի իրավահայեցողության ներքո են եղել և բոլոր հարցերը լուծում են ստացել միայն թագավորի անձնական կարգադրությամբ։ Բոլոր արձանագրությունները հնարավոր չի եղել ընթերցել, որովհետև պատնեշի մեջ եղած քարերի հաջորդականությունը խախտված է. ըստ երևույթին քարերը օգտագործվել են հետագա շինարարության մեջ, այլ օբյեկտներում, ուստի և դրանք տեղադրված են նոր վայրում բոլորովին այլ դասավորությամբ։ Այդ քարերից մի քանիսն էլ առհասարակ ոչնչացել են, գոյություն չունեն և լրիվ ընթերցման համար միայն արձանագրության վերջին մասն է անաղարտ պահպանվել։ Այն ընթերցվել է. «Մենք հրամայում ենք տվյալ կարգադրությունը ամրացնել քաղաքի դարպասներին, ինչպես նաև բոլոր այլ քաղաքների դարպասներին։ Մենք հրամայում ենք փորագրել այն այնպես, ինչպես գրված է ուղերձում, ճշտորեն»։

Սիլվան բնակավայրում հայտնաբերված արձանագրությունների հիման վրա Լեման-Հաուպտը եզրակացրել է, որ այդտեղ է եղել մայրաքաղաք Տիգրանակերտը. այդ տեսակետն ընդունվել է որպես աներկբայելի իրողություն։ Բայց քննությունները հետագայում այն եզրակացության հանգեցրին, որ հիշյալ արձանագրությունները պատկանել են մեր թվականության III կամ IV դարերին՝ Պապ թագավորի ժամանակներին, իսկ մեկ այլ վարկածով փորագրությունների ժամանակը համարել են 298—303 թթ.՝ վերագրելով Տրդատին։

Անցյալում ընդունված էր, որ Տիգրանակերտը գտնվելիս է եղել ներկայիս Դիարբեքիր (Ամիդ) քաղաքի տեղում. այդ կարծիքը երկար ժամանակ տիրող էր հայ պատմագրության մեջ։ Բայց Սիլվանում հայտնաբերված արձանագրությունները տեղիք տվեցին նոր տեսակետի. Լեման-Հաուպտի եզրահանգումը, անշուշտ, թույլ կուվան էր մայրաքաղաք Տիգրանակերտի տեղադիրքի ճշտորոշման համար, որովհետև նմանօրինակ թագավորական կարգադրությունները ոչ միայն Սիլվանի համար էին, այլ առհասարակ բոլոր քաղաքներին էին հղված, ուստի հավասարապես հնարավոր էր, որ այդ հիման վրա մի շարք այլ քաղաքներ ընդունվեին որպես Տիգրանակերտ մայրաքաղաք, եթե այդ քա-

---

[13] Երվանդ Հ. Փասունի. Ամիդ (Տիարպեքիր) Տիգրանակերտ (Ֆարղին) շփոթը հայ պատմագրության մեջ. Պեյրութ, 1968, էջ 20։

[14] C. F. Lehmann-Haupt. Armenien einst und jetzt. Bd. I, Berlin, 1910, S. 381, 501.

ղաքներում նույնպես պահպանված լինեին թագավորական կարգադրություններ պարունակող նմանօրինակ արձանագրություններ[15]։

Փավստոսը նկատել է, որ ժամանակին Տիգրանակերտ քաղաքը կոչվում էր Մարտիրուպոլիս, իսկ արաբների տիրակալության ընթացքում կոչեցին Ֆարղին և այլն։ Այն եզրակացությունը, որ Տիգրանակերտը հետագայում անվանվել է Մարտիրուպոլիս, նույնպես հենված է ենթադրությունների վրա։ Փավստոսը նշել էր, որ կառուցվել է մի մատուռ նվիրված նահատակների հիշատակին։ Այս տեղեկությունը հիմք է ծառայել ենթադրելու, որ հույների կողմից տրված Մարտիրուպոլիս անունը, որ նշանակում է նահատակների քաղաք, հնարավոր է, որ վերաբերել է Տիգրանակերտին, որովհետև այնտեղ մատուռ է կառուցված եղել նահատակների հիշատակին։ Սակայն Մարտիրուպոլիս կոչվել է Սիլվանը, որը ոչ մի առնչություն չունի Տիգրանակերտի հետ։ Այս թույլ կռվանը հետագայում ընդունվել է, և լայն ճանաչում է ստացել այն տեսակետը, որ մայրաքաղաք Տիգրանակերտի անունն է փոխարկվել Մարտիրուպոլսի, բայց, ինչպես տեսնում ենք, առանց հիմնավոր փաստերի։

Սակայն Լեման-Հաուպտի համար ոչ այնքան քարերի արձանագրություններն են հիմք ծառայել Տիգրանակերտ մայրաքաղաքի տեղորոշման համար, որքան նրա անձնական տպավորությունը, որ նա ստացել է առաջին անգամ Սիլվան այցելելիս. «Երբ արևամուտի ժամանակ Ֆարղին կմտնեի,— գրել է հեղինակը,—հոյակապ մնացորդները իսկույն այն տպավորությունը ստեղծեցին, որ դրանք իշխանական մի կամքի ստեղծագործություն պետք է լինեն»։ Այս կանխակալ կարծիքը, անշուշտ, չէր կարող դեր չխաղալ մայրաքաղաքի տեղորոշման հարցում, բայց և հետագայում էլ ոչ մի աշխատանք չի տարված այդ վարկածի հաստատման համար։ Սակայն Մարտիրուպոլսի հոյակապ մնացորդները Տիգրանակերտը չէին, այդ մասին պատմել է Պրոկոպիոս Կեսարացին։ Հուստինիանոսի օրոք Մարտիրուպոլիսը գլխավոր ստրատեգի կենտրոնն էր, որի զորաբաժինները պաշտպանում էին Մարաստանի հետ ունեցած սահմանագիծը։ Հուստինիանոս կայսրը «պարսպից դուրս հիմքեր փորեց և կառուցեց մի այլ պարիսպ՝ չորս ոտնաչափ հաստությամբ, երկու պատերի արանքում թողնելով նույնպես չորս ոտնաչափ լայնությամբ տարածություն։ Այդ նոր պարիսպը ևս նա բարձրացրեց քսան ոտնաչափ և այնպես արեց, որ բոլոր չափերով այն համընկնի նախկին պարսպին։ Դրանից հետո նա այդ երկու պատերի միջև եղած տարածությունը լցրեց քարերով և կրաշաղախով և այդպիսով ստացվեց տասներկու ոտնաչափ լայնությամբ մի կառույց։ Դրա վրա մոտավորապես նույն հաստության պարիսպ բարձրացրեց և դարձրեց նախկինի կրկնապատիկը։ Բացի դրանից, նա քաղաքի համար կառուցեց ամուր նախապարիսպ. մի խոսքով, այն բոլորը, ինչ անհրաժեշտ է քաղաքի ամրությունների պաշտպանության համար»[16]։ Լեման-Հաուպտը այդ բոլորը ընդունել է որպես մայրաքաղաք Տիգրանակերտի մնացորդներ։ Տիգրանակերտը կառուցվել է մ. թ. ա. 78—69 թթ., այդ առթիվ Ա. Ամֆիտեատրովը գրում է. «Ինչպիսի ուժեր ու միջոցներ չկիրառեր Տիգրանը, այնուհանդերձ քաղաքները չեն բուսնում հրամաններով», հավանական է, որ այն «հիմնադրված է երթուղիներից մեկի կայանում՝ վերածելով այն բերդի, իսկ շրջապատի տարածքը՝ բնակավայրի»[17]. այստեղ թերևս անտեսված են ստրկատիրական կարգերի աշխատանքային ուժերը, բայց ժամանակի շինարարական տեխնիկայի մակարդակը իրապես անհամաձայնություն է ընդգծում կառուցման ժամկետի ու քաղաքի «Մեծ» և «Հոյակապ» որակումների միջև։

Ստրաբոնը գտնում է, որ Լուկուլլոս զորավարը Տիգրանակերտը գրավել է նախքան քաղաքի շինարարության ավարտը. բնակիչներին Լուկուլլոսը թույլ-

---

15 Ն. Ադոնցը «Հայաստանի պատմություն» (Երևան, 1972) աշխատությունում գրել է, որ «Մարդինի մոտ գտնվում է Բնաբեղը՝ Հայկական Արշակունիների դղյակ-ամրոցը և Տիգրանի նշանավոր մայրաքաղաք Տիգրանակերտը» (էջ 69)։

16 Պրոկոպիոս Կեսարացի. Կառուցումների մասին. Երևան, 1967, էջ 192։

17 А. Амфитеатров. Армения и Рим. Спб., 1896, с. 127.

լատրել է մեկնել իրենց հայրենի երկրները, բայց մինչ այդ, քաղաքի գրավման ընթացքում, քանդվել են կիսով չափ ավարտած կառույցները և տեղում մնացել է միայն մի փոքրիկ գյուղ։ Կնշանակի Տիգրանակերտը չի գտնվել ներկայիս Սիլվան բնակավայրի տարածքում. այդ եզրակացությանն է նաև «Հռոմեական պատմության» հեղինակ Մոմզենը, որի նկարագրական մանրամասնությունները անտեսվել են ուսումնասիրողների կողմից։ Մոմզենը, նկարագրելով Լուկուլլոսի բանակի շարժումը դեպի Հայաստան Մալաթիա քաղաքից, նշում է, որ հռոմեական զորքը Տիգրիս գետն անցել է Ամիդում։ Ամիդից զորքը շարժվել է Տիգրիսի ձախ ափով և «Լուկուլլոսի բանակը դուրս եկավ այն ճանապարհի վրա, որ միացնում էր Տիգրանակերտը Արտաշատի հետ», սպառնալով կտրել այդ ճանապարհը, հետևապես և կապը Արտաշատի հետ։ Ապա հեղինակը շարունակում է. «Այն ժամանակ, երբ Տիգրիսի աջ ափին հռոմեական ջոկատը հետապնդում էր դեպի հյուսիս նահանջող արքային, Լուկուլլոսը անցավ գետի ձախ ափը ու մոտեցավ Տիգրանակերտին»։ Այդ նշանակում է, որ հռոմեական բանակը անցել է Քաղիրթ (Բաթման) գետը թերևս ներկայիս Բաթման գյուղի մոտակայքում, որովհետև Մոմզենի նկարագրությամբ՝ «Լուկուլլոսը, անցնելով գետի ձախ ափը, մոտեցավ Տիգրանակերտին»[18]։ Այս նկարագրությունից հետևում է, որ Տիգրանակերտը գտնվել է Բաթման գետի ձախ կողմում, հակադիր Սիլվանի տեղադիրքին։

Տիգրանակերտի պաշարման մասին տեղեկություններ հաղորդել են հունա-հռոմեական պատմիչները. այս կապակցությամբ ուսումնասիրելով հայկական ու հռոմեական զորքերի դասավորությունը, նրանց թիվը և շարժման ուղղությունները, ակադ. Հ. Մանանդյանը հանգել է եզրակացության, որ այդ պատմիչները «թեև հիմնական որոշ կետերում իրար չեն հակասում, սակայն մանրամասնությունների նկատմամբ իրար հետ բոլորովին անհաշտելի են։ Նրանց տարաձայնությունները, ինչպես կտեսնենք, այնքան են մեծ, որ միանգամայն անհնարին է մանրամասնաբար վերականգնել ճակատամարտի ամբողջ ընթացքը». նա նշում է, որ Պլուտարքոսի, Ապպիանոսի, Մեմնոնի և Փրանտինոսի, «հատկապես առաջին երկուսի ընդարձակ ու հիմնական վկայություններն այնքան խառնակ են ու իրար հակասող, որ միանգամայն անհնարին է տալ նրանց օգնությամբ ճակատամարտի ու պատերազմական իրադարձությունների ճշգրիտ պատկերը»[19]։ Նշված հակասությունները, ինչպես պարզվում է ներկա ուսումնասիրությամբ, բխում են ոչ թե պատմիչների սխալ մեկնաբանություններից, այլ մայրաքաղաք Տիգրանակերտի տեղը ոչ ճիշտ որոշելու հետևանք են։ Տիգրանակերտի տեղադիրքը համատեղելով ներկայիս Սիլվան բնակավայրի հետ, ուսումնասիրողները աշխատել են համաձայնեցնել պատերազմական գործողությունները հռոմեական պատմիչների նկարագրություններին, որի հետևանքով և ստացվել է այն հակասությունը, որի մասին նշել է Մանանդյանը։

Հռոմեական բանակը, ինչպես նկարագրել է ժամանակին Ապպիանոսը, հարձակվել է Տիգրանակերտի վրա արևելքից և ոչ արևմուտքից։ Ըստ երևույթին այս իրավիճակն էր ստիպել Տիգրանին, մայրաքաղաքը պաշարված տեսնելով, նոր բանակ կազմակերպելու նպատակով Արտաշատ մեկնել. բայց որովհետև գործող ճանապարհը գրավված էր հռոմեական բանակի կողմից, ուստի նա ստիպված էր մեկնել Մշո դաշտի ուղղությամբ։ Ապպիանոսի նկարագրություններով ևս հաստատվում է, որ Տիգրանակերտը Բաթման գետի ձախ կողմում էր, հակառակ Սիլվանի տեղադրությանը։ Հավաքագրած նոր բանակը, 69 թ. աշնանը Տիգրանը շարժեց «Տավրոսյան լեռներով, Տիգրանակերտը ազատագրելու նպատակով, իջավ Մշո դաշտից հարավ, Բաթման գետի ձախ կողմով», գրել է էքհարդը «Լուկուլլոսի շարժումը Հայաստանում» աշխատության էջերում։ Կնշանակի Տիգրանակերտը Բաթման գետի ոչ թե աջ կողմում էր, ինչպես ենթադրում են որոշ պատմաբաններ, այլ ձախ, այլապես Տիգրանի բա-

---

18 Տե՛ս Т. Моммзен. Римская история. Т. III. М., 1941, с. 58—59.

19 Հ. Մանանդյան. Երկեր. հ. Ա, Երևան, 1977, էջ 514—515։

նակը կշարժվեր ոչ թե Բաթման գետի ձախ ընթացքով, այլ ուղղակի Սիլվանի ուղղությամբ։ Բացի այդ, Տիգրանի զորքը հռոմեական բանակի հարձակմանն է ենթարկվել արևելքից՝ պաշարված Տիգրանակերտի կողմից (տե՛ս սխեման)։ Այս եզրահանգումը հաստատվում է Տիգրանակերտի ճակատամարտի նկարագրությամբ, որ շարադրել է Ապպիանոսը. «Հռոմեական բանակը հարձակվել է արևելքից, իսկ Տիգրանի զորքը գիմավորել է գտնվելով գետի ձախ կողմում»։ Կնշանակի ռազմական գործողությունը տեղի է ունեցել ոչ թե Սիլվանի ուղղությամբ, այլ Բաթման գետի արևելքում՝ Գարղան և Բաթման գետերի միջնատարածքում, որտեղ և գտնվելիս է եղել պաշարված մայրաքաղաք Տիգրանակերտը։



Կ. Բասմաջյանը մայրաքաղաք Տիգրանակերտն ու Սիլվանը ոչնչով միմյանց հետ չի կապում։ Նկարագրվում է Նփրկերտի (Սիլվանի) տեղադիրքը, ինչպես նաև Դիարբեքիրի գրված աշխարհագրական վայրը, որպես Ամիդ քաղաք. հեղինակը գտնում է, որ Տիգրանակերտը պետք է փնտրել այդ քաղաքներից բոլորովին տարբեր տեղում։

Սիլվան բնակավայրը գոյություն է ունեցել Պտղոմեոսի ժամանակ և այդ քաղաքի տեղադիրքը պարզորոշված է «Աշխարհագրական ձեռնարկում» տրված լայնության և երկայնության մեծություններով. բայց Պտղոմեոսը ոչ մի հիշատակություն չունի Տիգրանակերտի մասին։

Պտղոմեոսի ժամանակ Սիլվանը լատիներեն տառադարձությամբ գրվել է Sitae (Սիտաէ), իսկ հունարեն՝ Σοειτα (Սոեիտա), որի կորդինատները ճշտորեն համատեղվում են ներկայիս Սիլվան բնակավայրի հետ։ Սիլվան բնակավայրի անունը պահպանվել է նաև ականավոր քարտեզագետ Կաստորիուսի այսպես կոչված «Հռոմեական աշխարհաքարտեզի»[20] Մծբին—Տիգրանակերտ ուղեգծի վրա, Տիգրանակերտից շուրջ 25 մղոն (որ կազմում է 37 կիլոմետր)

[20] Օգոստոս կայսեր հրամանով և Մարկուս Վիպսանիուս Ագրիպայի (մ. թ. ա. 63—12 թթ.) ղեկավարությամբ Հռոմեական կայսրության ճանապարհների ուղղությամբ հանույթ է կատարված։ Այդ քարտեզներն են օգտագործված Կաստորիուսի «Հռոմեական աշխարհաքարտեզի հա-մար (տե՛ս L. Bagrow. History of Cartography. New York, 1964, p. 296).

արևմուտք։ Կնշանակի ոչ մի կասկած չի կարող լինել, որ այդ երկու քարտեզագետների ցուցադրած քաղաքը ներկայիս Սիլվան բնակավայրն է, բայց ոչ Տիգրանակերտը։ Այս եզրահանգումը հենվում է ոչ թե պատմիչների նկարագրությունների, այլ Պտղոմեոսի տված աշխարհագրական լայնության և երկայնության վրա։ Կաստորիուսի կազմած «Հռոմեական աշխարհաքարտեզը» ոչ մի առնչություն չունի Պտղոմեոսի աշխատությունների հետ, որովհետև դրանք կազմված են տարբեր ժամանակաշրջաններում. սակայն միմյանցից երկու դարով անջատված այդ աշխատությունները ճշգրտորեն ներկայացրել են Սիլվան (Sitae, Σοειτα) բնակավայրը նույն տեղադրությամբ[21]։



Տիգրանակերտ մայրաքաղաքի տեղադիրքը պարզորոշելու համար անհրաժեշտ էին վստահելի տվյալներ, կոորդինատներ կամ գծային երկարություններ, աշխարհագրական ճշգրիտ հեռավորություններ։ Հռոմեական ականավոր քարտեզագետ Կաստորիուսի «Հռոմեական աշխարհաքարտեզը», որ մի ժամանակ «Պևտինգերյան տախտակներ» անվամբ էր հայտնի, միակ վստահելի աղբյուրն է, որ կարող է գործնական օգնություն ցույց տալ Տիգրանակերտի տեղը բացահայտելու համար։ Քարտեզագետ Կաստորիուսի այդ քարտեզի մասին Հ. Մանանդյանը գրել է. «Կաստորիուսին վերագրված քարտեզը, ինչպես տեսնում ենք, կազմված է եղել կայսերական Հռոմի աշխարհակալության այն շրջանում, երբ հայերը դեռ չեն ունեցել գիր և գրականություն և երբ ֆեոդալական Հայաստանը գտնվել է դեռևս Արշակունիների իշխանության տակ։ Այդ հնության պատճառով նրա Հայաստանի ու հարևան երկրների մասը, բնականաբար, անփոխարինելի ու անգնահատելի մի աղբյուր է Հայկական լեռնաշխարհի պատմական աշխարհագրության»[22]։

«Հռոմեական աշխարհաքարտեզի» մասին կարծիք է հայտնել նաև ականավոր քարտեզագետ Կոնրադ Միլլերը. «Հին աշխարհագրության համար Կաստորիուսի այս քարտեզը ավելի կարևոր է, քան հին ժամանակի գիտական ամենանշանավոր աշխատությունը, որովհետև Կատսորիուսի թվերն ազատ են սիալ-

---

21 Տե՛ս Պտղոմեոսի Γεωγραφικη ὑφηγησις Αρμενιας Μεγαλης Θεσις (Λσιας Πινακ γ') և Կաստորիուսի Tabula Peutingeriana.

22 Հ. Մանանդյան. Հին Հայաստանի գլխավոր հանապարհները. Երևան, 1936, էջ 7։

ներից ու թերություններից, որոնք հատուկ են հին աշխարհի աստղաբաշխական և երկրա-բնագիտական հասկացություններին»[23]: Սակայն մինչև այսօր փորձ չի արված «Հռոմեական աշխարհաքարտեզի» միջոցով հայտնաբերել Տիգրանակերտի տեղադիրքը, որ առավել դյուրին կլիներ և մեծ ճշտությամբ կստացվեր:

«Հռոմեական աշխարհաքարտեզը» կազմված է III դարի վերջերին, սակայն նյութերը, որ օգտագործված են այդ քարտեզի համար, ստացված են մ. թ. ա. I դարում, հռոմեական արշավանքների ժամանակ քարտեզագրող առանձին ջոկատների աշխատանքի միջոցով, որ սահմանված էր հռոմեական սենատի հատուկ որոշմամբ: Այդ որոշման համաձայն բոլոր նոր գրաված երկրների ճանապարհային քարտեզները պետք է պատրաստվեին սահմանված միակերպ եղանակով: «Հռոմեական աշխարհաքարտեզի» հեղինակը անհայտ էր, ուստի անվանեցին «Պեւտինգերյան», այն անձնավորության անունով, որը հայտնաբերել էր քարտեզի պատճենը ու հրապարակել 1508 թ.: Հայ հեղինակի III—IV դդ. կազմած «Մղոնաչափք» քարտեզը չի հասել մինչև մեր օրերը, սակայն այդ քարտեզը նկարագրող ձեռագրի ընդօրինակումները, բացի Մաշտոցի անվան Մատենադարանից, գտնվում են նաև աշխարհի այլևայլ գրադարաններում[24]: Մղոնաչափքը առաջին աշխատությունն է, որ հիշատակել է Կաստորիուսին որպես «Հռոմեական աշխարհաքարտեզի» հեղինակի. այդ կարևոր բացահայտումը հիմք է ծառայել մինչ այդ «Պեւտինգերյան» անվամբ քարտեզը իսկական հեղինակի անունով կոչելու:

Աշխարհաքարտեզը ներկայացրել է Հռոմեական կայսրության այն ճանապարհները, որոնք այն ժամանակ ծառայել են ռազմական, առևտրական ու այլ նպատակների: Պատմական Հայաստանի տարածքում քարտեզագիր Կաստորիուսի քարտեզի վրա պատկերված է չորս մայրուղի, որոնք մայրաքաղաք Արտաշատը (հռոմեական տառադարձությամբ Արտաքսատա) միացրել են հաջորդականությամբ՝ 1. Բագավանի վրայով սահմանաքաղաք Սատաղի հետ, 2. Վիրքի վրայով Սեծովեղերյա Սեբաստոպոլիս քաղաքին, 3. Խոյ քաղաքի վրայով Համադան բնակավայրին և 4. Ոստանի ու Դատվանի վրայով Տիգրանակերտ քաղաքին: «Հռոմեական աշխարհաքարտեզը», բացի հիշյալ երթուղիներից, ներկայացրել է նաև ճանապարհներ, որոնք Տիգրանակերտի տեղադիրքի որոշման կապակցությամբ խոշոր նշանակություն են ստանում: Այդ ճանապարհներից արդեն հիշատակեցինք Արտաշատ—Տիգրանակերտ ուղեծիրը, սակայն դրանից բացի «Հռոմեական աշխարհաքարտեզը» ներկայացրել է նաև Միջագետք—Հայաստան, այն է՝ Մծբին—Տիգրանակերտ, ինչպես նաև Կապադովկիա—Հայաստան, այն է՝ Մալաթիա—Տիգրանակերտ ճանապարհները: «Հռոմեական աշխարհաքարտեզի» այդ ճանապարհների քաղաքները միացնող ուղղությունների վրա մակագրված են հեռավորությունները մղոններով[25]: Աշխարհաքարտեզի տվյալների համաձայն Տիգրանակերտ մայրաքաղաքը գտնվել է հռոմեական լեգեոնների այդ երեք տարբեր երթուղիների խաչմերուկում:

Կաստորիուսի «Հռոմեական աշխարհաքարտեզի» Արտաշատը մայրաքաղաք Տիգրանակերտի հետ միացնող ճանապարհը շարունակվել է Վանա լճի հարավային ափագծով, Ոստանի (Vostauna) ու Դատվանի (Dyzanas) վրայով, ինչպես ճիշտ կռահել էին պատմաբան Սանտալջյանն[26] ու քարտեզագետ Կոնրադ Միլլերը[27], հակառակ այն եզրահանգումների, որ շարադրել էր պատմաբան Մարկվարտը[28]:

---

[23] K. Miller. Itineraria Romana.

[24] Տե՛ս M. L. Saint-Martin. Mémoires historiques et géographiques sur l'Arménie, T. II, Paris, 1981. p. 395.

[25] Հռոմեական մղոնը այդ քարտեզի վրա ընդունված է 1483 մետր:

[26] Sandalgian. Histoire documentaire de l'Arménie. T. I—II, Rome, 1917 p. 522.

[27] K. Miller. Itineraria Romana, S. 745.

[28] J. Markwart. Südarmenien und die Tigrisquellen. Wien. 1930, S. 61.

Արտաշատ—Տիգրանակերտ երթուղու բնակավայրերը և նրանց միջև ընկած հեռավորությունները, որ գրանցել է քարտեզագետ Կաստորիուսը, տրված են ստորև բերվող աղյուսակում. խոշոր մասշտաբի քարտեզների ուսումնասիրությամբ այդ բնակավայրերը տեղայնացվել են ներկայիս բնակավայրերի կամ պատմական անցյալից մնացած առկա ավերակների հետ, նկատի առնելով տոպոգրաֆիական տեղադիրքը, ուղղությունը, հեռավորությունը, ինչպես նաև Պտղոմեոսի կոորդինատները։

Արտաշատ—Տիգրանակերտ երթուղու տվյալները
ըստ Կաստորիուսի քարտեզի

Ուղեծրի կայանները	Տեղայնացված ներկայիս բնակավայրերը	Հեռավորություններ	
		մղոններով	կիլոմետրով
Artaxata	Արտաշատ	39	58[29]
Catispi	Նորաշենի տարածքում	27	40
Sorue	Սինիխ	24	35
Anteba	Ռեստամ	24	35
Nasabi	Պերե	32	47
Flogoana	Ղոթուր	41	61
Molithie	Խոշաբ	32	47
Vostauna	Ոստան	53	80
Dyzanas	Դատվան	22	33
Cymiza	Սիմեկ	20	30
Zansen	Շետեկ	30	45
Tigranokerta	Տիգրանակերտ		
	Ընդամենը	344	511

Այդ երթուղու ամբողջ երկարությունը Արտաշատից մինչև Տիգրանակերտ. Կաստորիուսի տվյալների համաձայն, 344 մղոն է, որ համապատասխանում է 511 կիլոմետրի։ Սակայն խոշոր մասշտաբի քարտեզների վրա կատարած չափումներով Արտաշատից մինչև Սիլվան (ենթադրական Տիգրանակերտը) ստացվում է ոչ թե 511 կիլոմետր, այլ 550 կիլոմետր. սա նշանակում է, որ Տիգրանակերտը ոչ թե ներկայիս Սիլվան բնակավայրն է, այլ նրանից 39 կիլոմետր արևելք է (տե՛ս քարտեզը)։ Բացի այդ, Դատվանից Տիգրանակերտ 106 կիլոմետր է (72 մղոն), մինչդեռ չափումներից ստացվում է 144 կիլոմետր, որով դարձյալ հաստատվում է, որ Տիգրանակերտ մայրաքաղաքը ոչ թե Սիլվան բնակավայրն է, այլ Սիլվանից 38 կիլոմետր արևելք է գտնվել։

Երկրորդ երթուղին. Կաստորիուսի քարտեզի վրա Մալաթիա—Տիգրանակերտ քաղաքների հեռավորությունը 207 մղոն է, 307 կիլոմետր, մինչդեռ խոշոր մասշտաբի քարտեզով ստացվում է 269 կիլոմետր. կնշանակի տվյալ հեռավորությունը նկատի ունի ոչ թե Սիլվան բնակավայրը որպես Տիգրանակերտ. այլ նրանից 38 կիլոմետր արևելք (տե՛ս քարտեզը)։

Մալաթիա—Տիգրանակերտ երթուղու բնակավայրերի ցանկը և նրանց միջև ընկած հեռավորությունները, որ ներկայացրել է քարտեզագետ Կաստորիուսը, տրված են ստորև բերվող աղյուսակում. Կաստորիուսի քարտեզի բնա-

29 Աղյուսակում նշված Կաստորիուսի քարտեզի հեռավորությունները ճշտորեն համատեղվում են ներկայիս քարտեզների համապատասխան բնակավայրերի հեռավորությունների հետ։

կավայրերը տեղայնացվել են ներկա բնակավայրերի կամ առկա ավերակների հետ, նկատի առնելով տոպոգրաֆիական տեղադիրքը, ուղղությունը, հեռավորությունը, ինչպես նաև Պտղոմեոսի կոորդինատները։



Մալաթիա—Տիգրանակերտ երթուղու տվյալները ըստ Կաստորիուսի քարտեզի

Ուղեծրի կայանները	Տեղայնացված ներկայիս բնակավայրերը	Հեռավորություններ	
		մղոններով	կիլոմետրով
Melitene	Մալաթիա[30]	8	12
Adaras	Զոլաքլի	8	12
Thirtoni	Իդուլդա	25	37
Colchis	Իոլչատ	13	19
Corulli	Միվրիջի	27	40
Corssa	Մադեն	43	64
ad Tigren	(Ամիդ) Դիարբեքիր	58	86
Colchana	Մոլաբադի	25	37
Tigranocerta	Տիգրանակերտ		
	Ընդամենը	207	307

Մալաթիայից Տիգրանակերտ երթուղին անցնում է Դիարբեքիրի վրայով, որ Կաստորիուսի քարտեզի վրա նշված է՝ *ad Tigren* և այդ քաղաքից մինչև Տիգրանակերտ, *ըստ Կաստորիուսի, 123 կիլոմետր է (83 մղոն). մինչդեռ քարտեզների վրա մինչև Սիլվան ստացվում է 84 կիլոմետր, կնշանակի ներկայիս Սիլվան քաղաքը իրապես մայրաքաղաք Տիգրանակերտը չէ, որովհետև Տիգրանակերտը գտնվել է Սիլվան քաղաքից 39 կիլոմետր արևելք։*

Երրորդ երթուղին. *Մծբին—Տիգրանակերտ երթուղու ամբողջ երկարությունն ըստ Կաստորիուսի քարտեզի 134 մղոն է, որ հավասար է 199 կիլոմետ-*

30 *Կաստորիուսի քարտեզի Մալաթիան ոչ թե ներկայիս քաղաքն է, այլ նրանից շուրջ 14 կիլոմետր հյուսիս-արևելք գտնվող «Հին Մալաթիա» բնակավայրը։*

բի. սակայն իրական երկարությունը մինչև Սիլվան ստացվեց 162 կիլոմետր. կնշանակի Սիլվանը Տիգրանակերտից արևմուտք է 37 կիլոմետր։ Այդ երթուղու բնակավայրերի ցանկը և հեռավորությունները, որ ներկայացրել է քարտեզագետ Կաստորիուսը, տրված են ստորև աղյուսակում։

Ուղեծրի կայանները	Տեղայնացված բնակավայրերը	Հեռավորություններ	
		մղոններով	կիլոմետրով
Nisabin	Մծբին	16	23
Thamaudi	Ամահուդի	30	45
Ague-Frigidoe	Կըզլ-Թափա	17	25
Sammachi	Շամրախ	14	21
Arcalapis	Ակպինար	32	48
Sitae	Սիլվան	10	15
Thaibaras	Մոլարադի	15	22
Tigranocerta	Տիգրանակերտ		
	Ընդամենը	134	199



Մծբին—Տիգրանակերտ երթուղին առանձնահատուկ ուշադրության է արժանի, որովհետև այդ ճանապարհի վրա ցույց է տրված սկզբում Սիտաե (Սիլվան) բնակավայրը և ապա Տիգրանակերտը, *որ նրանից 37 կիլոմետր հեռավորության վրա է (տե՛ս քարտեզը)։ Կնշանակի Տիգրանակերտը գտնվելիս է եղել Տիգրիս գետի Բաթման և Արզան վտակներից մոտավորապես հավասար հեռավորության վրա. ներկայիս Շելմա (Սելմա) բնակավայրի շրջակայքում, պատմական Հայաստանի Արզանայի (Հազրոյի) դաշտում*[31]։ *Այդ տարածքում կան երկու առանձին բլուրներ, որ ընդհանուր հարթությունից 120—150 մետր բարձրություն ունեն*[32]։ *Դեպի արևմուտք, Բաթման վտակից այն կողմ Սիլվան բնակավայրի շրջապատի բարձրադիր, ուժեղ մասնատված լեռնաղանգվածներն են, իսկ հյուսիսում՝ Սանասանի լեռները, ուստի միակ մատչելի և բաց տեսադաշտը հարավային կողմում է, որ համաչափորեն իջնում է դեպի Տիգրիսի հովիտը։*

МЕСТОПОЛОЖЕНИЕ ТИГРАНАКЕРТА ПО РИМСКОЙ КАРТЕ МИРА КАРТОГРАФА КАСТОРИЯ

М. М. ХАЧАТРЯН

Резюме

Армянские историки V века не указали точного местоположения бывшей столицы Армении города Тигранакерт, основанного в I в. до н. э. Тиграном II, так как город был разрушен в том же веке римскими легионерами под руководством Лукулла. Высказывались предположения о местонахождении этой столицы на территории современного города Диарбекир или на юге, в районе Нисибина, не подтвержденные какими-либо фактами. В труде Птолемея Тигранакерт не упоминается, однако он нанесен на «Римскую карту мира», или Певтингерову карту, созданную в III в. н. э. На ней изображены все дороги, которые связывали города Арташат, Малатия и Нисибин с Тигранакертом. По данным этой карты, составленной Касторием по материалам съемок I в. до н. э., Тигранакерт был расположен в долине между реками Батмансу и Арзан, там, где ныне находится населенный пункт Шелма (Селма). Исследование на месте доказало бы наш вывод.

---

31 *Սիլվան բնակավայրից արևելք, 36 կիլոմետր հեռավորության վրա է նշված* Sedrik *բնակավայրը. տե՛ս* Tanoglu Ali. Atlas of Turkey. Istanbul, 1964.

32 *Հավանական է, որ դրանք այն բլուրներն են, որոնց մասին հիշատակել է հռոմեական պատմիչը. «Հայկական զորքը այն չէր գրավել, և հռոմեացիները օգտվեցին հանգամանքից նրա հակադիր մասի ստորոտում խոշոր զորամաս կենտրոնացնելու համար»։ Անշուշտ, ուսումնասիրությունները տեղում, հնագիտական պեղումների հիման վրա, կտան հարցի վերջնական լուծումը։*